


Directory-Yearbook

Special Edition

KESSABTZIS

IN U.S.A., CANADA



1977

17th EDITION

Published By

KESSAB EDUCATIONAL ASSOCIATION of LOS ANGELES, INC.
A CALIFORNIA NON-PROFIT CORPORATION

K.E.A. BOARD OF DIRECTORS FOR 1976

Vahe Ashkarian	President
Dr. Misak Abdulian	Vice President
Bedros Apelian	Treasurer
Arpineh Sapatjian	Secretary
Manas Boujikian	Director
Alexan Koundakjian	Director
Manoushag Fermanian	Director
Krikor Hakimian	Director
Garbis Garboushian	Director

CAMP COMMITTEE

Dr. Jack Megerdichian	Chairman
Vahe Apelian	Treasurer
Alexan Koundakjian	Assistant Treasurer
Haigouhe Akian	Recording Secretary
Manoushag Fermanian	Corresponding Secretary
Krikor Hakimian	Camp Manager
Levon Chakalozian	Member
Vahe Yaralian	Member
Hrair Atikian	Member
Rita Tilkian	Member



ԲԺԻՇԿ ԱՒԵՏԻՍ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

ՈԳԵՂԷՆ ՄԱՐԴԸ

Հայութիւնը իր երակներու մէջ պահող, հայ անունը իր պայծառ քակասին որպէս դափնեպսակ հպարտութեամբ կրող այս անգուգական բժիշկը ծնած էր հիւսիսային Սուրիոյ, գուտ հայաբնակ, Քեսապ գաւառին մէջ 1884 թուին:

Նախնական ուսումը տեղւոյն վրայ ստանալէ ետք կը յաճախէ Այնթապի Քալէնը, ուր բախտը եւ պատեհութիւնը կ'ունենայ ծանօթանալու, Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարաբանութեամբ իմորուած եւ ազատական ոգիով հրաբորբ երիտասարդներու եւ կը դարբնուի որպէս տիպար գաղափարական:

Երբ 1903-4-ին Պէյրուֆի մէջ կը հիմնուի Հ.Յ.Դաշնակցութիւնը, արդէն երիտասարդ Աւետիս անոր անդրանիկ անդամներու շարքին կը պատկանի: Ազատական երիտասարդը այնքան տարուած էր իր գաղափարով եւ այնքան վստահութիւն շահած իր շրջապատէն, որ 1905-ին երբ Սիմոն Զաւարեան, նոր սերունդի ազգային առողջ ոգիի նոր դարբնոց՝ Զաւարեան Ուսանողական Միութիւնը կը հիմնէ, Աւետիս Իննէնիկեան կ'ըլլայ անոր գլխաւոր եւ օժանդակ ուժերէն մէկը:

Այնքապի Քալէն մեկնելէն առաջ, ինչպէս նաեւ Քալէնէն վերադարձին երկուֆական տարի իր ծննդավայրի մտաւոր յուսաւորութեամբ նախանձախնդիր, Աւետիս Իննէնիկեան կը վարէ ուսուցչական պաշտօն գաւառական դպրոցին մէջ:

Նոյն ոգիէն դրդուած, 1906-ին, իր ողջ էութեամբ հայ այս ֆսաներկու տարեկան յանդուգն եւ հեռատես երիտասարդը, գեղեցիկ գաղափարը կը յղանայ եւ կը նախանձեռնէ Քեսապի Ուսումնասիրաց Միութեան հաստատումին, որ ո՛չ միայն յաջողութեամբ կը պսակուի, այլ նաեւ ամբողջ Սոսիոյ մէջ առաջին Հայ երկրորդական վարժարանը ունենալու պատիւին կ'արժանանայ:

1911-14 տարիներուն Աւետիս Իննէնիկեան կը փոխադրուի Պէյրուֆ եւ որպէս բժշկութեան ուսանող կը ժամախէ տեղւոյն Ամերիկեան համալսարանը: 1914-ին կ'ամուսնանայ Քեսապի առաջին բժիշկի դստեր հետ եւ կը կազմէ իր ուրոյն ընտանեկան երջանիկ յարկը:

Նոյն տարին գաղափարական եւ մտաւոր կարողութիւններով օժտուած եւ յարգանք պարտադրող եզական Աւետիս, Զաւարեան Ուսանողական Միութեան եւ Սոսիոյ Հ.Յ.Դ. կազմի որպէս յարմարագոյն եւ լրջախոհ մատգամաւոր կը մեկնի Կարին եւ կը մասնակցի Հ.Յ.Դաշնակցութեան 8-որդ Ընդհանուր ժողովին:

Կը հասնին աֆսոքի տարիները: Հայկական շրջաններ բռնի կը դատարկուին եւ կը ֆշուին դէպի անապատները: Այս դառն նակատագրին հաղորդակից կը դառնայ նաեւ Քեսապ իր շրջակայքով: Տարագրութենէն ֆանի մը ամիսներ ետք Աւետիսի հարազատները կը հաստատուին Ճըսըր

Շուուր, իսկ ինք, կ'անցնի Հալէպ եւ պատեհութիւնը կ'ունենայ տեղական բանակին մէջ ծառայիլու որպէս բժիշկի օգնական:

Զինադադարէն ետք, ուսումնատենջ այս երիտասարդը կրկին կը վերադառնայ Պէյրուֆ եւ կը շարունակէ իր բժշկական ուսումը, դարձեալ Ամերիկեան Համալսարանին մէջ, որու ընթացքը կ'աւարտէ 1919-ին:

Յաջորդ տարին իսկ 1920-21 տարիներին, որպէս շրջանային բժիշկ կը ծառայէ Սուետիոյ -Մուսա Տաղ- շրջանին մէջ եւ ապա կը հաստատուի իր պապեանական ծննդավայր Քեսապի մէջ:

1923-25 տարիներուն որպէս Սուրիոյ ողջ Հայութեան ներկայացուցիչ կ'ընտրուի Սուրիոյ Խորհրդարանի Հայ երեսփոխան:

1927-28 թուականներու ֆաղաֆական վիճակը կը պարտադրէ գինք, որոշ ժամանակով մը տեղափոխուիլ Անգլիական Սուտան -Խարթում- եւ պաշտօնավարել որպէս պետական բժիշկ:

1928-էն ետք, մինչեւ իր մահը -1976- վերջնականապէս կը հաստատուի Քեսապ եւ մղիչ ուժը կը դառնայ իր գաւառական շրջանի յառաջդիմութեան, վերելքին եւ բարգաւաճման աշխատանքներուն:

Բժիշկ Աւետիս Իննէնիկեանի համար ծառայել եւ ծառայութիւն բառերը միայն արտայայտութիւններ եւ կամ երեւոյթներ չէին: Ծառայել, իրեն համար կը նշանակէր ապրիլ երջանիկ, երջանկացնելով ուրիշները: Ծառայութիւն, կը նշանակէր փնտրել երջանկութիւնը ուրիշներու համար եւ ուսուցանել գայն գտնելու գաղտնիքը. այլ խժսֆով ուրիշը երջանկացնել եւ ուրիշով երջանկանալ: Այս էր կեանքի հիմնական եղանակը եւ իմաստը իրեն համար:

Բազմակողմանի շնորհքներով եւ կարողութիւններով օժտուած այս տիպար եւ օրինակելի անձնաւորութիւնը եղաւ իր գաւառի նահապետը: Եղաւ Հայ կեանքի յաւիտեանական ինկարկուն, իր կարելին ի սպաս դնելով յօգուտ Հայութեան: Բժ. Աւետիս Իննէնիկեան ո՛չ միայն Քեսապի, այլ ամբողջ

Հայութեան եւ հայ գաղութներու հանգոյցը եղաւ թէ՛ ազգային, թէ՛ կրթական, թէ՛ մշակութային, թէ՛ մտաւորական եւ թէ՛ գաղափարական մարզերու մէջ: Այս բոլոր մարզերը իր գուրգուռանքի եւ մշտնջենական հոգածութեան առարկաները եղան: Իր սիրտը բարախեց միա՛յն ու միայն այս բոլորով, իր երակներուն մէջ հայու իր արիւնը խոխոջեց միշտ ««Տէր, տեցո՛՛ր ու գՀայս» մեղեդին:

Քեսապի Ուսումնասիրաց Միութիւնը յանուն Հայութեան եւ մասնաւորաբար յանուն՝ Քեսապցի ժողովուրդին 1977-ի տաերգիրքը կը ձօնէ Հանգ. ԲԺ. Աւետիս Ինճեհիկեանի յիշատակին, որպէս մնայուն կոթող եւ յարգանք իր արժանաւոր գաւակին: Երախտիքի այս յուշարձանով կ'ուխտենք եւ կ'երդնունք ըլլալ իր առաջնորդող ոգիի գիտակի՛ց եւ նուիրեալ ջահակիրները, իր գծգծ անապարհով հպարտանքով տողանցող զինուորագրեալները եւ իր միշտակի անմահութեան հաւատքով մաքրագրաց երկրպագուները:

Թող իր հոգին հրնուի իր ոգիի ժառանգներու ստուար բանակով:

ՀԱՄԵՍՏՈՒԹԵԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

(ՏՈՔԹ. Ա. ԻՆՃԷՃԻԿԵԱՆԻ ՈՒՂԻՈՎ)

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ճշմարտութիւնները մարդերով կեանք եւ իմաստ կը զգենուն: Մարդու կեանքն է ճանապարհը ճշմարտութեան: Մարդու գործն է փորձաքարը ճշմարտութեան:

Լաբալիսեան հաստատումներ են ասոնք: Ակնբախ իրողութիւններ: Ըսուելու կարիքն անգամ չունին:

Բայց այսօր, այս պարագային, այստեղ պէտք է ըսուին: Որովհետեւ իւրայատուկ գոյն մը կ'առնեն սա պահուն երբ մտածեմ մարդու մը մասին, որուն վերջերս մահը հանդիպեցաւ եւ սակայն ոչինչ կրցաւ տանիլ իրմէ բայց միայն հողէն ու հովէն տարուելիքը, նման ծառին վրայ դեղին հագած տերեւին:

Ամենագ'ր մահը հեղ մը եւս պարտուեցաւ որովհետեւ հանդիպեցաւ այնպիսի կեանքի մը, որուն մէջ մարմնացեալ եւ մարդացեալ ճշմարտութիւնները իրենց յաւերժական աւաչը երգեր էին տարիներ շարունակ: Աւաչ՝ որ այսօր վերածուեցաւ եղերերգի եղերագին մահուն: Աւաչ՝ որ գիւղական բլրալանջերէն հնչող մելանուշ սրինգին նման այսօր կը հասնի մեր՝ ապրողներու՝ ականջներուն եւ «Սօսեաց Անտառ»ի սրսփիւններուն ձայնով ճշմարտութիւններ կը ցանէ մեր գիտակցութեանց մէջ:

Ճշմարտութիւններու այդ կենսախօս վարդապետը շատերուն համար անծանօթ անուն մը, ոմանց համար համեստութեան անփայլ մշուշին մէջ թազնուած աղօտ անուն մը չէ: Իսկ բոլոր անոնց որոնց համար երջանկութիւն եղաւ զինք ճանչնալը մտքերուն մէջ անջնջելի տիպար մը եւ սրտերուն մէջ քաղցր ներկայութիւն մը եղաւ, մտերիմ յուշարար մը՝ անհերքելի ճշմարտութիւններու եւ բարոյական ու ազգային անխախտելի սկզբունքներու:

Այս բառերուն մէջէն ահա կը գծագրուի իր անունը մեր աչքերուն դիմաց, ինչպէս մարդկային տիպարը մեր հոգիներուն մէջ:

ԱԻԵՏԻՍ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ...

Աւելի պարզ, հարազատ, բնական եւ ժողովրդական՝ ՏՈՔԹՈՐԸ...

ՏՈՔԹՈՐ՝ ոչ միայն մարմնի առողջութեան պահակ ու խնամատար, այլ՝ ՏՈՔԹՈՐԸ ողջ գիւղի մը ժողովուրդին՝ անոր ազգային-հասարակակա, կրթական-մշակութային, ընկերային-քաղաքական կեանքի առաջնորդը, դարմանատարը, վերահսկողը:

Ոչ ոք կրնայ հարազատօրէն եւ ամբողջակամօրէն ըմբռնել Քեսապն ու Քեսապցին առանց Տոքթորին: Առանցքն էր գիւղի կեանքին, որուն ներկայութիւնը ինքնին պատկառանքի եւ ներշնչումի աղբիւր էր մանաւանդ նոր սերունդին համար պատանութենէ դէպի երիտասարդութիւն բացուող մեր սերունդի տղոց համար:

Որպէս մէկն անոնցմէ որ գիւղէն իր ճամբան սկսաւ եւ աշխարհի չորս ծագերուն վրայ քալելու առիթ ունեցաւ, որ՝ ճրագի ու մոմի — եւ երբեմն մախրի — լոյսին տակ դաս սորվելու գեղջկական աւանդութենէն հայ լեզուի ու պատմութեան նախատարերքը քաղեց եւ ապա համալսարաններու մէջ աշխատելու բախտը ունեցաւ, այսօր կու գամ վկայել այն ճշմարտութեանց մասին որոնք եղան սկզբնատիպ եւ անջնջելի դասը Տոքթորին կենսաբարբառ օրինակին եւ յանկուցիչ տիպարային ազդեցութեան. —

Տոբթորը կը խօսի այսօր, ինչպէս խօսեցաւ անցեալին իր կեանքով ու գործով, եւ պիտի խօսի ապագային իր յիշատակի գորութեամբ, ըսելու համար.—

Բարութիւնը բարութիւնն է երբ անսակարկ, անվերապահ կերպով կ'իրագործուի որպէս արտաբխում անձին հոգեկան ներքին նառագայթումին:

Ո՞վ կրնայ ուրանալ որ իր ձեռքի, իր գիտութեան, իր արուեստին, իր միտքին բարիքը չէ վայելած այս կամ այն ձեւով, ուղղակի կամ անուղղակի ազդեցութեամբ: Քանի՛ քանի՛ հայ մարդիկ ոյժ առին իր հոգիէն բխած խօսքերով: Քանի՛ քանի՛ մարդիկ իրենց կեանքը վերանորոգեցին, վէրքերը փարատեցին, ցաւերը մեղմացորցին իր ձեռքի ճարտար խնամքով, որ գիտութեան հետ միասին սէրն ու նուիրումը ունէր որպէս աղբիւր եւ ոյժ բժշկութեան:

Բարութիւնը իր հոգիին ճառագայթումն էր, ինչպէս լոյսը՝ արեւին...: Բարիքը իր ձեռքին շնորհն էր, ինչպէս պտուղը՝ ծառին...:

Ազգային ծառայութիւնը ծառայութիւնն է երբ գերանձնական, ընդհանրական նախանձախնդրութենէ եւ շահագրգռութենէ կը բխի:

Տոբթորը իր ողջ կեանքի ընթացքին ուրիշը աւելի նկատի ունեցաւ քան ինքզինքը: Այդ «ուրիշ»ը ըմբռնեց որպէս իր հաւաքական գոյութեան, իր համայնական եսին մէկ մասնիկը, իրմէ անբաժան, շողախուած իր անձին կազմոածքին մէջ: Մարդկայնութեան բարութեան եւ ծառայութեան այս խորքը գունաւորուած էր հայկական ազգային երանգով: Այդ «ուրիշ»ը առաջին հերթին իր պաշտած ազգն էր եւ այդ ազգի մէջ մէկ անդամը անխտիր: Իր անձնական, ընտանեկան կեանքը յաճախ շուքի տակ մնաց ազգային իր ընդհանրական զբաղումներուն եւ ծառայութեանց տիրապետող հանգամանքին բերումով: Իր տունը յաճախ ուրիշներով այնքան էր լեցուն, որ ընտանիքի անդամներ գինք քիչ անգամ կրնային տեսնել իրենց անմիջական շրջանակին մէջ:

Կարճ խօսքով՝ իր ազգին սէրը իր արեան գոյնն էր դարձած եւ ինք կ'ապրէր այդ արիւնին տրոփովը, ազգի կեանքին կշռոյթովը:

Գաղափարական կեանքը գեղեցիկ է երբ չի տժգունիր մանրուք, նեղ հաշիւներէն եւ հեղձուցիչ սահմանափակումներէն ու անձնակեդրոն շահագրգռութիւններէն:

Իր հայրենի գիւղի բնութեան մաքուր օդին եւ զուլալ ջուրին պէս անաղարտ էր իր գաղափարական կեցուածքը մարդկային կեանքին եւ ազգային ծառայութեան նկատմամբ: Քիչ

մարդիկ կան իր արուեստի՝ բժշկական գործի մէջ, որ վեր մնան նիւթի փորձութենէն: Քիչերէն մէկը եղաւ ինք նաեւ այս մարզի մէջ: Նիւթն ու նիւթականը երբեք չկրցան տիրապետել իր հոգիին եւ անոր մէջ ծաղկած իր գաղափարական ըմբռնումներուն վրայ, ինչպէս այսօր մահը չկրցաւ տանիլ իր անձը, տանելէ ետք իր մարմինը...:

Գաղափարական խորքը իր անձին եւ կեանքին՝ կու տար իրեն նաեւ այն հազուագիւտ նկարագրային գիծերէն մէկը որ ընդհանրական մօտեցումի կեցուածքն է, անձնակեդրոն եւ նեղահայեաց մօտեցումներէն այնքա՛ն հեռու: Հակառակ իր վայելած համաժողովրդական համակրութեան եւ յարգանքին, «վայելեց» դառնութիւնը անհիմն քննադատութիւններու, որոնց արմատը անհասկացողութիւնն էր, այտինքն ոմանց անկարողութիւնը ըմբռնելու համար իր հայեցակէտներու եւ կեցուածքներու ճշմարիտ եւ ամբողջական իմաստը:

Բայց այդ բոլորին դիմաց իր սէրը ստուեր չհազաւ, իր գաղափարականութիւնը ժանգի փորձութեան չհանդիպեցաւ: Ո՞ր չկրցաւ պահել իր սրտին մէջ: Իր անձին հոգեղէն կազմուածքը տեղ չունէր նման փոքրոգութեանց: Ազգային հարազատ ըմբռնումներն ու ապրումները, մարդկայնական բարձր գաղափարներն ու առաքինութիւնները այնքան լեցուն եւ յորդ պահեր էին իր սիրտը որ ստուերին, փոշիին ու ժանգին տեղ չէր մնացեր: Ազգը ողողեր էր իր անձը...:

Դպրոցը սի՛րտն է ազգին երբ սիրոյ, գոհողութեան ոգին գապանակն է դաստիարակին:

Տոբթորի հոգիին մէջ հաւատքի ոյժով ամուր համոզում էր դարձած այն ըմբռնումը որ մարդկային քաղաքակրթութեան անիւնն հետ քայլ պահելու համար անհրաժեշտ էր ոյժ տալ ուսման եւ գիտութեան: Հայ դպրոցի թէ՛ ընդհանուր կրթական գործը եւ թէ՛ հայեցի դաստիարակութեան դերը կը նկատէր աւագ պարտականութիւնը գիւղի պատասխանատու դեկավարներուն: Վստահ եմ ինձի հետ միասին իմ սերնդակից բոլոր եղբայրներն ու քոյրերը կրնան վկայել թէ գիւղին փառքը եղաւ կրթական եւ մշակութային գործը, մինչեւ անգամ ակումբը «գրադիսանա» (գրատուն, գրապալատ) անուանելու աստիճան: Իր բարոյական աջակցութիւնը խթան եղաւ դպրոցին, զօրավիգ՝ կրթական մշակներուն:

Բայց դպրոցը իրեն համար հաստատութիւն մը չէր, այլ՝ ընտանիք մը: Ուսուցիչները պաշտօնեաներու գիտակցութիւնը ունենալէ աւելի՝ կոչեցեալներու հոգին պէտք էր ունենային եւ ըստ այնմ անձնակա՛ն նախանձախնդրութեամբ յառաջ տանէին իրենց առաքելութիւնը:

Դպրոցը սակայն դպրոցէն անդին եւ դպրոցէն դուրս պէտք էր շարունակուէր — այդ՝ հասարակական գիտակցութեան դարբնո՛ւմն էր ժողովուրդի կեանքին մէջ: Պատանեկան միութիւնը, Հայ Կարմիր Պաշտ, մշակութային միութիւնները, երաժշտական, թատերական, դասախօսական ձեռնարկները, այս բոլորը կը կազմէին այն «դպրոցը» որուն վերատեսուէր Տոբթորն էր, գործակիցներու, նուիրեալներու խումբով մը շրջապատուած:

Դեռ ինչե՛ր, ինչե՛ր կարելի է ըսել, խօսիլ, գրել ՏՈՒԹՈՐԻ մասին: Յարգանքի սա անմիջական եւ ինքնաբուխ տուրքին մէջ չէ կարելի ամէն ինչ սեղմել: Բայց չէ կարելի նաեւ գեղջել այն ամէնէն տիրական, բարացուցիչ գիծերէն մէկը իր անձին եւ գործին որ զինք շատ աւելի անդին կը տանի քան իր պաշտած գիւղի աշխարհագրական եւ ժողովրդային սահմանները:

Հայութեան միութեան եւ ամբողջականութեան ըմբռնումը մայր ջիղն էր իր մտածողութեան, մղիչ ոյժն էր իր գործունէութեան: Հայրենակցական այլազանութենէ անդին, հայրենակցային կոտորակումները խորթ էին իր հոգիին: Իր գիւղն ու գիւղացին կը նկատէր մէ՛կ հայրենիքի եւ մէ՛կ հայութեան մէ՛կ պարտէզին մէջ բացուած տունկ մը, որուն կանանչութիւնն ու պտղաբերումը մաս կը կազմէր պարտէզին, հայոց «փոքր ածու» թարմութեան եւ կենսունակութեան:

Մէկ կողմէ հայութեան ընդհանրականութեան այդ առողջ ըմբռնումին թարգմանն էր ինքը, իր կեանքով, իր գործով, իր հայրենակիցներուն մօտ: Միւս կողմէ, իր հայրենի գիւղին եւ առ հասարակ գաւառի հայութեան մեկնաբանը ընդհանուր ժողովներու եւ գործունէութիւններու մէջ: Տոբթորը Քեսապի մէջ ապրեցաւ բայց ոչ Քեսապով միայն եւ Քեսապի համար սուկ: Մեր գիւղի դեսպանն էր ընդհանուր հայութեան եւ նոյնիսկ օտար շրջանակներու մէջ: Շատեր գիւղն ու գիւղացին իրմով ճանչցան: Բայց իր ազգային դերակատարութիւնը տարածուեցաւ գիւղէն անդին, Սուրիոյ, Լիբանանի, Եգիպտոսի եւ այլ գաղութներու մէջ հասնելու համար մինչեւ հռչակաւոր եւ նշանակալից Կարնոյ ժողովը 1914-ին, որուն մասնակցողներուն վերջին վերապրողն էր, կը խորհիմ:

Երկար է, բազմերես եւ ճոխ պատմութիւնը այս հայուն: Վէպ է անոր կեանքը: Պէտք է վիպագիրը: Որքա՛ն պիտի ուզէի պատիւն ունենալ, շնորհքին հետ միասին, այդ վիպագիրը ըլլալու:

Բայց կը հաւատամ որ վէպը կը գրուի օր մը — վէպը այն բացառիկ արժէքներուն եւ արժանիքներուն որոնց ծաղկեփունջին անունն է

— ԱԻԵՏԻՍ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ:

Այդ վէպին նախերգանքին նախագիծ փորձ մըն են այս տողերը, զորս կ'ընծայեմ իր շիրիմին որպէս ծաղկեպսակ՝ քաղուած իր ցանած հունտերէն իմ եւ իմ սերնդակից գաւակներուն այս ընդհանրական նոր հայրիկին: Որուն մեծութիւնը եղաւ իր համեստութիւնը, փառքը եղաւ իր գաղափարականութիւնը, պատիւը եղաւ իր գերանձնական նուիրումը:

Ճէպէլ Աքրայի սէգ գազաթէն հովեր թող գան եւ շիրիմիդ շուրջ երգ դառնան, «Փառաց ի փառս» հնչեն ու կաշկանդուած հայրենիքիդ բողոքը թող վերածեն պատգամի գալիք սերունդներուն համար:

Ծովին եւ լեռներուն միջեւ հանգոյց կապած եւ Հոռմէական լէգէոններու ու խաչակիր բանակներու ոտքերով դրոշմուած բերդաքաղաքէն՝ «Գալայ» թարձունքէն մեղմ գեփիւրը խնկեղէն ծուէններու պէս թող բոյր ցանէ շիրիմիդ վրայ:

Իսկ մեր սրտերէն ներս մենք ոչինչ ունինք աւելի գեղեցիկ քեզի ընծայելու քան այն ինչ որ դուն տուիր մեզի, բայց՝ «ընդ միոյ՝ երեսուն, ընդ միոյ՝ վաթսուն եւ ընդ միոյ՝ հարիւր»...:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՏՈՒԹ. ԱԻԵՏԻՍ ԻՆՃԷՃԻԿԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Կարն ժամանակով անցած էի Սուրիա, Լիբանանի կարօտեալներուն ի նպաստ կատարուած հանգանակութեան երկրորդ առաքումով զբաղելու, ինչպէս նաեւ Լիբանանի բաղաճախական պատերազմի ումբերու որոտումէն յոգնած ջիղերուս քիչ մը հանգիստ տալու համար (թէեւ Լիբանանէն դուրս գալէ քանի մը օր ետք տարօրինակ մտատանջութիւն մը կը տիրէ արդէն մարդուս վրայ, որ վայրկեան առաջ կ'ուզէ վերադառնալ ու վերագտնել իր միջավայրը):

Հալեպի մէջ ներկայ ըլլալէ ետք Ապրիլ 24ի ոգեկոչումներուն, կ'անցնիմ Քեսապ, ուր հազիւ պանդոկ տեղաւորուած՝ առաջին այցելութիւնս կու տամ գիւղին նահապետին՝ Տոքթ. Աւետիս Իննէնիկեանին:

Զինք կը գտնեմ անկողնին մէջ, «Քազիւ»ի հին թիւերէն մէկը ձեռքին. կ'ուզէ ուղիղ նստիլ, բայց սրունքի եւ կոնքի ոսկորին կոտորուածքը արգելք կը հանդիսանայ: Ինծի ընկերակցող Քեսապցիները խոր յարգանքով կը խոնարհին ու հրաժեշտ կ'առնեն: Տոքթորը կ'ուզէ զիս հիւրասիրել անպատճառ: Զայն կու տայ տիկնոջ, որ իր կեանքի ընկերոջ նման ծանրաբեռնուած տարիներու բեռան տակ, ծանրաբայլ դուրս կ'ելլէ ու ապա մեզ կը պատուէ իր իսկ պատրաստած կեռասի խմիչքով:

Քիչ անց, ուրիշ այցելուներ կու գան. մէկը Քեսապի բարբառով կը խօսի, ուրիշ մը՝ տեղեկութիւններ կը հաղորդէ օրուան անցուդարձերուն մասին: Հակառակ իր 92 տարիներուն, Տոքթորին հետաքրքրութիւնը սուր է. սրտով կը խօսի, երբեմն իրաւունք տալով խօսակիցին, երբեմն անհամաձայն գտնուելով ու իմաստուն եւ փորձառու մարդու իր կարծիքը տալով:

Ապա, երկարօրէն կը պատմէ Պոլսէն, Տրապիզոնէն, Սեւ Ծովու վրայով բեռնատար նաւով իր անցնելուն մասին: Հայրական յատուկ հպարտութեամբ կը պատմէ թէ քանի մը ամիս առաջ-գաւակները ուզած են զինք Ամերիկա փոխադրել: Խորհուրդ կու տամ որ գոնէ արդիական միջոցներով վիրաբուժական գործողութեան մը համար մեկնի եւ առիթ ընծայէ գաւակներուն իրենց հօր ծառայութիւն մատուցանելու:

— Իմ տեղս Քեսապ է, կ'ըսէ. սիրտս յոգնած է, գործողութեան չի դիմանար: Եթէ օտարութեան մէջ մեռնիմ, մարմնիս մոխիրը հոս կը բերեն. մինչդեռ իմ գերեզմանս պատրաստ է. հոս, ժողովուրդիս մէջ կ'ուզեմ թաղուիլ: Եւ ի վերջոյ, տակաւին քանի՞ տարի պիտի ապրիմ: Օրերս համրուած են, տղաս...:

Նոր այցելու մը կը հասնի ու հրաժեշտ կ'առնեմ խոստանալէ ետք որ դարձեալ կը հանդիպիմ:

Քանի մը օր ետք, ամբողջ Քեսապ կը փսփսայ որ Տոքթորին վիճակը ծանր է, ու Մայիս 19ի առաւօտեան, եկեղեցւոյ զանգը տխուր կը ղօղանջէ...: Առաւօտեան ժամը 1ին շիջած է Տոքթորը:

Քեսապի Թաղական Խորհուրդը, երիտասարդ Տէր Յուսիկ քահանան ընդհանուր գօրաշարժի մէջ են. հեռագիրներ պէտք է ուղարկուին, հեռաձայններ ըլլան. ու կէսօրէ ետք Լաթափալէն եկած անհատ ազգայիններ, քահանայ հայրեր լեցուցած են արդէն եկեղեցւոյ կից հիւրասենեակը: Ներկայ են նաեւ Բերիոյ Թեմի Առաջնորդ, համագիւղացի Տաթեւ Եպս. Սարգիսեանը, Բերիոյ Գաւառական, Քաղաքական եւ միւս ժողովներու ու Խորհուրդներու ներկայացուցիչները:

Նախֆան արարողութիւնը, Քեսապի շրջակայ գիւղերէն երկսեռ գիւղացիներ ծանր դէմքերով կը փութան եկեղեցի յարգանքի վերջին տուրքը տալու Տոքթորին: Սեւ Աղբիւրէն, Գալատուրանէն, Զինարէն, Էսկիւրանէն, Զաֆալնըֆէն, Էֆիգօլուիսէն բոլորը հոն են: Արծուիկները, երիտասարդները ծաղկեպսակներ կը փոխադրեն, շարքեր կը կազմեն ու դագաղը ձեռամբարձ կը փոխադրուի եկեղեցի:

Դժուարութեամբ կը մտնենք եկեղեցի, որ արդէն գրաւուած է յուղարկաւորներու՝ մանաւանդ ծերերու կողմէ, որոնք արձաններու նման անշարժ, գրաւած են առաջին նստարանները. իր ամբողջ կեանքը Քեսապի եւ շրջակայքին նուիրած իրենց սիրելի Տոքթորին դագաղը շրջապատած են:

Եկեղեցական տպաւորիչ արարողութենէն ետք, խօսք կ'առնէ Տաթեւ Սրբազան ու իր անկեղծ ու զգացուած դամբանականով կը յուզէ ժողովուրդը, որ լո՛ւռ կ'արտասուէ: Կը յուզուի նաեւ ինք՝ Սրբազան Հայրը:

Դագաղը ձեռամբարձ, կը հասնինք գերեզմանատուն. ծառերու տակ, ժայռերու վրայ ժողովուրդը ամէն տեղ է: Գարնանային ջաղրը յանկարծ անօրինակ սաստկութեամբ քանի մը վայրկեանի մէջ մեզ խիստ կը դարձնէ. ո՛չ ոք կը շարժի տեղէն, ո՛չ ոք: Ընթերցուող Աւետարանին վրայ միայն կը բացուի հովանոց մը: Յուղարկաւորները, ծերերը ցուպերու յենած, Տոքթորին հանդէպ իրենց անսահման յարգանքի փաստը դարձեալ կու տան եւ մարդիկ աւելի կը պրկուին երբ եռագոյնով կը պատեն դագաղը նախֆան գերեզման իջեցնելը: արագ կը գոցուի ան. վրան կը բարձրանայ ծաղկեպսակներու բլուր մը:

Շիրիմին վրայ պատշաճ դամբանականներ կը խօսին Ազգ. Իշխանութեանց կողմէ, Ազգ. Գաւառական ժողովի ատենապետ Պր. Վազգէն Սէլեան, նմանապէս Աւետարանական հովիւ՝ Վեր. Գերպապեան եւ երիտասարդներու ներկայացուցիչը: Բոլորն ալ վեր կ'առնեն Տոքթորին հագուազիւտ արժանիքներ:

րը, ազգասիրութեան, հայրենասիրութեան, իր ժողովուրդին գոհուելու անսահման սէրն ու ոգին որ գինձ մղած էր արհամարհելու հանգստաւէտ կեանքն ու նիւթական յաջողութիւնները ու մնալու Քեսապ իր ժողովուրդի ծոցին մէջ եւ ծառայելու անոր:

Դամբանախօսները փսոսացին այն բացը, որ ձգեց Տոբթորը իր ետին:

Վերջին երիտասարդ դամբանախօսը կ'երդնու ամէնուն կողմէ հաւատարիմ մնալ անոր գաղափարական ուղիին:

Ընդհանուր յուզումնախառն ոգեւորութեան մէջ «Մշակ Բանուորը» կը պոթկայ ամէնուն կուրծքերէն. գերեզմանին մէջէն իսկ Տոբթորը կ'ոգեւորէր ու կը խտացնէր շարքերը. ու մինչ տեղատարափ անձրելը կը շարունակէ տեղալ, «Վէրքերով լի ջան փետային» թնդացնելով, ժողովուրդը կը ցրուի, Տոբթորին յիշատակը իր մօտ ամուր պահելու վնասկանութեամբ:

Ապա, ակումբի մէջ, հոգեմաշի սեղանին շուրջ կը խմբուիմք, իսկ հեռու ֆողաֆներէ եկողները վերադարձի նամբան կը բռնեն:

Ցուրտ հողը թեթեւ գայ յոգնատանջ ոսկորներուդ, սիրելի Տոբթոր:

ՄԵԹՐ ՎԱՐԴԳԷՍ ՇԱՄԼԵԱՆ

ԸՆԿԵՐ Ս. ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ ԽՕՍՔԸ ՏՈԲԹ. Ա. ԻՆՃԷՃԻԿԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԵՍԻՆ

Երբ ինձմէ խնդրուիցաւ խօսք առնել Տոբթ. Ինճէճիկեանի յիշատակին նուիրուած այս հանդիսութեան, սիրով ընդունեցի: Նախ, որովհետեւ առիթը ունեցած էի անձնապէս մօտէն ճանչնալու զինք: Եւ երկրորդ, պատիւ էր ինձի ներկայացնել մեր ազգային հրապարակի այս հազուագիւտ դէմքը, որու նմաններուն, դժբախտաբար, միշտ չենք հանդիպիր:

Տոբթ. Ինճէճիկեան բախտը ունեցած էր ճանչնալու մեր կուսակցութեան հիմնադիրներէն Սիմոն Զաւարեանը, երբ ան 1906ին կ'անցնէր Քէսապէն: Նոյն թուականին, Տոբթ. Ինճէճիկեան կը դառնայ հիմնադիրը Հ.Յ.Դաշնակցութեան առաջին կազմակերպութեան, Քէսապի մէջ:

Սիմոն Զաւարեան Պէյրութի մէջ հիմնած է Դաշնակցական ուսանողական կորիզ մը, որ յետագային դարձաւ Հ.Յ.Դ. Զաւարեան Ուսանողական Միութիւնը:

Զաւարեան Ուսանողական Միութեան առաջին անդամներէն էր նաեւ Տոբթոր Ինճէճիկեան, երբ բժշկական ուսանող էր Պէյրութի մէջ, եւ իբրեւ ուսուցիչ ու Սուրիոյ կազմակերպութեան պատգամաւոր է որ 1914ին մասնակցեցաւ Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովին, Կարինի մէջ: Այնուհետեւ, Տոբթ. Ինճէճիկեան մասնակցեցաւ բազմաթիւ ընդհանուր ժողովներու, ուր իր խօսքը մեծ կշիռ ունէր բոլորին մօտ անխտիր: Ան եղաւ նաեւ ղեկավարներէն մէկը Սուրիոյ մեր կազմակերպութեան, նոյնիսկ թերեւս հակառակ իր կամքին, քանի ան միշտ ալ կը խուսափէր փառքէ եւ տիտղոսներէ. 1923-25 շրջանին, ան ընտրուեցաւ պետական երեսփոխան Սուրիական Խորհրդարանին մէջ: Սակայն ինչպէս միշտ, իր ծննդավայրը մագնիսի մը պէս կը քաշէր զինք ու ան չուզեց շարունակել այդ ասպարէզը: Այժմ թոյլ տուէք ինձի անհատական ուժերու գիծով ալ խօսելու Տոբթ. Ինճէճիկեանի մասին, քանի բախտը ունիցած եմ զինք ճանչնալու:

Կը յիշեմ թէ ինչպէս մեր կուսակցութեան հանրածանօթ ղեկավարներէն Դրօներ, Նաւասարդեաններ եւ Գապագեաններ անխառն արտայայտութեամբ կ'արտայայտուէին Տոբթ. Ինճէճիկեանի անձին եւ կարողութիւններուն մասին: Քիչ մը զարմանալի կը թուէր ինձի այս երեւոյթը, որովհետեւ Տոբթ. Ինճէճիկեան հրապարակի վրայ չէր երբեք եւ չուէր պաշտօններ ու տիտղոսներ: Առաջին անգամ Տոբթ. Ինճէճիկեանին հանդիպած եմ Քէսապի մէջ, երբ իբրեւ Զաւարեան Ուսանողական Միութեան անդամ կը մասնակցէի պտոյտի մը եւ առաջին տպաւորութիւնս այն էր որ կը գտմուէի հայրական զգացումները ընդհանուրին վրայ տարածած նահապետի մը ներկայութեան:

Այնուհետեւ, բազմաթիւ առիթներով եւս մայմաններու տակ, շփում ունեցած եմ Տոքթորին հետ ու անդրադարձած, թէ իր վայելած վարկն ու հեղինակութիւնը կը բխէին իր արդարամտութենէն, անկողմնակալութենէն եւ նուիրիւմի ու զոհաբերութեան պատրաստակամութենէն:

Եթէ ուրիշներ հաշիւներու, փառասիրութիւններու, համակրանքներու մղումով կը մոռնային երբեմն ընդհանրական շահը, Տոքթ. Ինճէճիկեան կը մնար միշտ հաւատարիմ իր որդիգրած սկզբունքներուն եւ հեռու էր որեւէ մտածումէ եւ գործէ, որ կիրքը ունէր իբրեւ դրդապատճառ:

Տոքթ. Ինճէճիկեան գիտէր լսել մեծն ու փոքրը, գիտէր խօսիլ մեծին եւ փոքրին հետ: Երբեք չէր աշխատէր պարտադրել ինքզինքն ու իր կարծիքները, գիտէր յարգել բոլորը, ինքնավստահորթիւն ներշնչել իրեն հետ խօլողներուն, իրեն դիմողներուն եւ այդ ճամբով փոխադարձաբար շահիլ բոլորին վստահութիւնն ու յարգանքը:

Գիտէք բոլորդ ալ թէ ան ինչ մեծ սիրով կապուած էր իր ծննդավայր Քէսապին, հողին ու ժողովուրդին: Կը հիշեմ թէ ինչպէս տասնեակ տարիներ առաջ, Քէսապի մէջ համարձակութիւնը կ'ուսնենայի քիչ մը մեղադրական ձեւով իրեն հարցնելու թէ ինչու չի գար Պէյրութ, չի մտներ կուսակցական ու հանրային աւելի եռուն կեանքի մէջ, չի վերցներ աւելի մեծ ու գործնական պատասխանատուութիւններ, մանաւանդ որ Քէսապը սկսած էր հետզհետէ պարպուիլ: Ու ան հանդարտօրէն կը պատասխանէր թէ իր արմատները կը գտնուէին Քէսապի հողին մէջ ու հոն պիտի մնան մինչեւ վերջ:

Տարիներ յետոյ, երբ հոս եկած էր այցելութեան, իր որդւոյն Յակոբի տան մէջ, գրեթէ նոյն հարցումն էր որ կ'ուղղէր իրեն, ըսելով թէ պիտի մնա՞յ հոս իր թոռներուն եւ զաւակներուն մօտ եւ իր պատասխանը կ'ըլլար նոյնը, թէ իր տեղը Քէսապն է ու հոն է որ պիտի փակէ իր աչքերը:

Տոքթ. Ինճէճիկեան հասած էր այն խոր իմաստութեան, թէ մարդ պէտք է խնամքով, հոգածութեամբ, սիրով ու նուիրումով մշակէ իր պարտէզը, իր փոքր ածուն, որմէ բուսած բարիքները կրնան սակայն օգտակար ըլլալ ընդհանուրին:

Ու թերեւս երբ հաւատարիմ իր խոստումին, կը շիջէր իր այնքան սիրած Քէսապին մէջ, խորիմաստ դաս մը կուտար մեզի պէս արմատախիլ բազմութիւններուն, թէ ծառ մը, բեղմնաւոր ու պտղաբեր ըլլալու համար, իր արմատներով հաւատարիմ պէտք է մնայ մայր հողին:

Այս օրերուն. երբ աշխարհաքաղաքացիական սպառնալիքին ենթակայ ենք իբրեւ ժողովուրդ ե կուսակցութիւն, հետեւելով Տոքթ. Ինճէճիկեանի կեանքով ու մահովը գծուած օրինակին, պէտք է փորձենք գտնել մեր արմատները, պէտք է վերադառնանք մեր սկզբունքներուն, մեր հայկականութեան մաքրամաքուր ակունքներուն:

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի բոլոր ընկերներուն կողմէ կը խոնարհիմ մեր կուսակցական նահապետներէն՝ Ընկեր Ինճէճիկեանի պայծառ յիշատակին առջեւ:

«ԱՆՓՈՒՆԱՐԻՆԵԼԻ ՆԱՀԱՊԵՏԸ»՝

ՏՈՔԹ. Ա. ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

(ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ)

Գրեց Զուարթ Աբելեան

Շուրջ քառասուն օրեր առաջ, Քէսապաբնակ քէսապցին հողին յանձնեց այդ հողէն ծնած, շուրջ երկու քառասնամեակ այդ հողին վրայ ապրած, գործած ու նոյն հողին վերադառնալու բաւականութեամբն ու բաղձանքով հեռաւոր արեւակից հարազատներէն կամովին զրկուած իր անփոխարինելի նահապետը՝ Տոքթ. Աւետիս Ինճէճիկեանը:

Արհեստով բժիշկ՝ սակայն անհատական կառոյցով ժողովրդական ղեկավար. անխտրական եւ բոլորանուէր ծառայող, այլ խօսքով՝ տակաւին՝ համամարդկային կոչուելու բոլոր տուեալները գործնականօրէն ցուցաբերող ազգային եզակի տիպար մը պէս Տոքթ. Ա. Ինճէճիկեան:

Որպէս բժիշկ՝ Տոքթ. Ինճէճիկեանի ղեղադարանի պահեստը գիտական ղեղերէն միշտ աւելի հարուստ էր համա-

ժողովրդական այնպիսի սպեղանիներով, որոնք ե՛լ աստուածայորդոր են, ե՛լ մարդկային պահանջք, ե՛լ անվիճելիօրէն արդիւնաւէտ:

Ան շուրջօրէն օգտագործեց յոյսը, համբերութիւնը, տոկունութիւնը, սփոփանքը, քաջալերութիւնը, յարատեւութիւնը՝ ըստ պահանջքին, որով միայն կարելի դարձաւ կեանքը տանելի դարձնել: Տակաւին աքսորէն ծուատ-ծուատ վերադարձած եւ տոհմական իրենց գիւղաւանն ու երգիքը անտանելի պայմաններու մէջ գտած բազմազարգար բայց հրաշալի՛ (իր խօսքով) իր ժողովուրդին:

Անցեալի այդ օրերէն մինչեւ իր կեանքի շիջումը, պատեհ առիթով թէ անժամանակ, բազմաթիւ եւ բազմապիսի այցելուներու կարաւանը՝ դէպի տոբթորին բնակարանը, չնօսրացաւ երբեք: Տեղաբնակ իր հարազատներուն հոգիներէն ու մտքերէն ներս ան կը ջանար ներմուծել առողջ եւ դրական մտածելու արուեստը, որպէսզի անհատը կեանքի դժուարին պայմաններուն եւ պարագաներուն ի տես կարենար ձերբազատուիլ պարտուողական հոգեբանութենէն:

Իսկ բարեկամ այցելուները՝ կը ստանային առանձնապէս իրենց հետաքրքրութիւնը գոհացնող բաժինը, ըլլար ան պատմական, գաղափարական թէ ընկերային:

Տոբթորը մեծ հպարտութեամբ եւ խանդավառող ոգեւորութեամբ կը պատմէր Որոնդէս գետի ափերուն փռուած Սելեկեաններու երբեմնի հզօր բերդաքաղաք՝ ու յետագային Հայոց մեծ արքայ Տրգրանին համար մայրաքաղաք դարձած Անտիոքի ու տեղւոյն մէջ Հայոց ստեղծած բեղմնաւոր կեանքին շուրջ: Հետզհետէ, սակայն, կը խուսափէր իր ձայնը, կարծէք հազազի ցաւէ բռնուած ըլլար, երբ պատմութիւնը շարունակելով թեւակոխէր Արեւմտեան գուիցերատիպ, Հայոց պանծալի Կիլիկիոյ պարպումի էջերուն: Ականջալուր դարձող այցելուն, սեփական մեծ հարստութիւն մը կորսնցնողի մը կսկիծով, գլուխը ձախէն աջ կ'երերցնէր՝ եթէ նոյնիսկ պատմութեան սահմանաւոր տեղեկութիւն մը միայն ունեցած ըլլար:

Երիտասարդն ու պատանին հաճոյքով կ'ունկնդրէին տոբթորը եւ պատուախնդիր Հայու կենցաղով տոգորուն, պատանի իրենց կորովը նախանձախնդրօրէն Հայուն արդար դատին նուիրողի ուխտով կը բաժնուէին անկէ:

Պարագան նոյնն էր որեւէ հատուածի պատկանող գաղափարական Հայուն համար ալ: Մօտիկ անցեալին, պատեհ առիթով մը այսպէս կը պատմէր բարեկամ մը.

— 1924-25 թուականներուն, աքսորականի ցուպը վար դրած ու իր առօրեան հազիւ թէ տանելի դարձուցած՝ դեռ երէկի հացազուրկ Հայութիւնը կը սկսէր արդէն կազմակերպել ազգային-գաղափարական իր կեանքը: Գարնանամուտի պայծառ յետմիջօրէ մը, հազիւ ժամերու տարբերութեամբ, երեք ճամբորդներ՝ Արշակ Յովհաննէսեան, Թորոս Լուսինեան եւ Սեդրակ (մականունը մոռցուած) կը ժամանեն Քէսապ: Իւրաքանչիւրը, իր հերթին, առանց տատամսումի կ'ուղղուի Տոբթ. Ինճէճիկեանի բնակարանը: (Ի հարկէ այդ շրջանին գիւղին մէջ իջեւանելու յատուկ տեղ չկար, ո՛չ ալ տեղաբնակներու մօտ հիւր ընդունելու յարմարութիւն):

Ընթրիքի սեղանին շուրջ կատարած իրենց խօսակցութենէն ի յայտ կու գայ, որ երեքն ալ իրենց կարգին գաղափարա-կազմակերպչական աշխատանքներ կատարելու համար կու գային Քէսապի եւ շրջանին մէջ: Առաջինը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, երկրորդը՝ Ռ. Ա. Կուսակցութիւնը, իսկ երրորդը՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը կը ներկայացնէր: Գաղափարական երեք ընկերները հաճելի զրոյց կը կատարեն տոբթորին օթեւան-բնակարանին մէջ ու յաջորդ օր բաժնուելով, առանձնաբար կը լծուին իրենց աշխատանքներուն:

Հարկ է ընդունիլ, որ ժողովրդական ղեկավար դառնալը շատ ալ հեշտ գործ մը չէ, մանաւանդ երբ «մարգարէն իր քաղաքէն է»... Հակառակ այս իրողութեան, սակայն, տոբթորը պատնէչին վրայ մնաց մինչեւ իր մահը:

Թուականէս 1՝ տարի առաջ, Սուրիոյ մէջ խուճապ մը գաղափարական ազգայիններու հետ կը ձերբակալուի նաեւ տոբթորը: Իրեն համար սահմանուած խարազանածեծի պարտականութիւնը կը վստահուի նոյնինքն զինքը մատնող անհատին: Երբ առանձին կը թողուին երկուքը՝ պատժանկուղին մէջ, ուր հարկադրաբար պէտք էր գործեր յարազանը, տոբթորը քաղցրադէմ կ'ըսէ բարեկամադաւ հերոսին.

— Տղա՛ս, ես պատրաստ եմ խարազանի քու հարուածներուն, վստահ ըլլալով որ այսօրուրնէ ետք նո՛ր պիտի մարդանաս դուն...

Ալ ինչպէ՞ս կարելի էր խարազանը օղին ձօճել տոբթորին մերկ մարմինը հարուածելու համար... Ընդհակառակն, հազիւ լուրը տարածուած, այլազգի թէ հայ բարեկամներ համահալաք կը խուճեն բանտ (Լաթաքիա), հազար բողոք յղելով իշխանութեանց թէ ինչպէ՛ս կարելի էր տոբթորը բանտի խոնակ նկուղներուն մէջ պառկեցնել մարդասէր այն բժիշկը՝ որ

Հաթայի օրով նոյնիսկ մինչեւ Անտիոքէն հեռանալը մարդասիրաբար դարմանած ու խնայած էր հայ թէ այլազգի հիւանդները անխորաբար:

Արդարեւ, եթէ գտնուեցան այսօրինակ պարագայական հակառակորդներ, անոնք կրցան միայն ի բացակայութեան մնալ ատելաժառ, եւ սակայն հարազատի իրենց գուրգուրանքն ու բարեկամութիւնը չզլացան անոր՝ երբեք, իր ներկայութեան: Ուշագրաւ երեւոյթ մըն էր այս, եւ ի հարկէ բաղձալի է որ բոլոր ղեկավար առաջնորդները տիրանան այդ թաքուն արուեստին, եթէ երբեք գաղտնիք մըն է ան:

Ի վերջոյ, «ծառը պտուղէն կը ճանչցուի»ն երբ կ'ընդունինք իբրեւ սուրբ գրային իրականութիւն, Տոբթ. Ինճէճիկեանի երկու մանչ գաւակներն ալ (Յակոբ եւ Գաբրիէլ Ինճէճիկեաններ) մեծ նուիրականութեամբ կը կատարեն ազգանուէր եւ ազգանպաստ կրթական աշխատանք՝ աւելի՛ տատակոտ անդաստաններէ ներս, որպիսին է անպարագիծ Ամերիկան:

Տոբթ. Ինճէճիկեանի մահը թող ըլլայ բաց հրաւէր մը բոլոր Քէսապաբնակ մեր հարազատներուն որպէսզի ջանան անոր արժանաւոր յաջորդը դառնալ, կարենալ փոխանցելու համար բաց օթեւանի այդ հարազատութիւնը համահայկական առումով, անխորականօրէն, բոլորին համար. ու այն ատեն ես՝

Հազար ու մէկ ներողութիւն կը խնդրեմ, հազար ու մէկ անգամ, Տոբթ. Ա. Ինճէճիկեանը «անփոխարինելի նահապետ»ը կոչած ըլլալուս համար:

Վարձքդ կատա՛ր, սիրելի Տոբթ. Ինճէճիկեան, հանգի՛ստ բազմամեայ յոգնատանջ քու ոսկորներուն եւ սփոփանք՝ կեանքիդ աննմանընկերոջդ եւ հարազատներուդ:

ԱՆՁՆՈՒՐԱՅ ՆԱՀԱՊԵՏԸ

(ՏՈՔԹ. ԱԻԵՏԻՍ ԻՆՃԷՃԻՔԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ

ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԹԻԻ)

Խոր սուգի մէջ է ամբողջ գիւղը: Պարզ, սիրող սրտերէն ներս մեկնողին յիշատակը կարծես կ'անի, կը մեծնայ օրէ օր: Արեւն իսկ հաւատաւոր ուխտաւորի մը պէս ամէն առաւօտ առաջին հերթին կ'այցելէ լոռութեան բլուրին բնակիչներուն: Խաղաղութեան գրկին մէջ խունկն ու աղօթքը հողի

բոյր կը ստանան: Քեսապի անձնուրաց նահապետին, բոլորին սիրելի Տոբթորին՝ գերեզման ընկերակցող հեղեղանման անձրեւը եթէ հետք չձգեց իր ետին, սակայն գիւղի ժողովուրդին սիրոյ ու յարգանքի արցունքները տակաւին հոն են, Կասիոս Լերան անթառամ ծաղիկներուն պէս, որովհետեւ ամէն անձ ունի ժառանգ յիշատակ մը իրմէ:

Ծեր արծիւի մը նման կառչած իր արծուերոյն գիւղին, երկար երկար տարիներ անխոնջ հսկեց ու շունչ տուաւ գիւղի մոխրացող կրակին: Ծնած էր ծառայելու իր գիւղի ժողովուրդին, ուխտած էր հաւատարիմ մնալ Հայ Դատին, Հ. Յ. Դաշնակցութեան, ու մեռնիլ պարտականութեան պատնէշին վրայ:

Հակառակ Ամերիկաբնակ գաւակներուն կարօտի կանչին, աղաչանքին, հակառակ կարգ մը այցելու բժիշկներու ու ազգայիններու թելադրանքին որ մեկնի գէթ ենթարկուելու համար վերջերս արկածահար կոնքի ոսկրային վիրաբուժական գործողութեան մը, ինք՝ սիրահարի մը պէս կառչած իր ասի մը Հայաստան որակուած ծննդավայրին, անտարբեր, ժպտուն կը պատասխանէր բոլորին՝

— Իմ տեղս հոս է, հո՛ւս, իմ ժողովուրդի գրկին մէջ, ու այս օրհնեալ հողը պէտք է ըլլայ վերջին կայանս:

Ի ծնէ լաւատես, ժպտուն, կատակասէր եւ ընկերային, իւրաքանչիւր հայրենակիցի համար ունէր միշտ թելադրանք մը, քաջալերանք մը: Իր բժշկութիւնը որքան գիտական նոյնքան ալ հոգեբանական եղաւ, իսկ նիւթականը՝ մնաց երկրորդական հարց: Գրական ամսաթերթերու եւ օրաթերթերու ծարաւը ունէր: Այցելուներուն հետ անխուսափելի էին քաղաքական եւ ընկերային վիճարանութիւնները, որոնց մէջ ունէր որոշ հմտութիւն ու փորձառութիւն: Ունէր գրական հետաքրքրութիւններ եւ հեղինակն է տեղագրական եւ ազգագրական գործերու, ինչպէս նաեւ Քեսապի բարբառին յատուկ ուսումնասիրութեան մը: Իսկ իր յուշերը՝ երկար տարիներու աշխատանքէ ետք տակաւին կը մնային անաւարտ, հակառակ բազմաթիւ խնդրանքներու, իր խոստումն ու հաւաստիքը կը մնային միշտ յառաջիկայ ամբան: Դժբախտաբար այդ գեղեցիկ ամարավերջը չեկած ինք մեկնեցաւ, գրեթէ անաւարտ ձգելով մեզի համար այնքան արժէքաւոր իր յուշերը:

Մահուան մասին երբեք չմտածեց, աւելին՝ անտեսեց զայն ու անտրտուն, կենսունակ ոգիով ամբողջ վաթսուն եւ հինգ երկար տարիներ անընդհատ ծառայեց իր ժողովուրդին, գիւղի մը մէջ՝ որ թեւ մեծ թիւով բժիշկներ տուած էր օտար եր-

կինքներու ժողովուրդներուն ծառայելու համար՝ իսկ իր մահուան սնարին եւ ոչ մէկ պաշտօնակից որ գէթ խոստանար շարունակել իր գործը: Մեկնեցաւ անկասկած ցաւ ի սիրտ լինով իր ժողովուրդը առանց բժիշկի ու դեկավարի:

Պատանի հասակին լծուեցաւ ազգային եւ կուսակցական գործերու եւ պարտականութիւններու: Հազիւ շրջանաւարտ, վերադարձաւ ծննդավայր ու ստանձնեց գիւղին դեկը: Հաւատարիմ իր ժողովուրդի ղեկավարներուն, իր առաջին գործը եղաւ գիւղի երեւելիներուն հետ միատեղ հիմնել Ազգային Երկրորդական Վարժարան մը, Ուսումնասիրաց անունով: Շնորհիւ իր եւ ուսուցչական որակաւոր կազմի ջանքերուն, շատ չանցած հեռաւոր քաղաքներէ ընդունեց աշակերտութիւն եւ տուաւ փայլուն շրջանաւարտներ: Սակայն մեզի անձանօք պատճառներով փակուեցաւ, հրաշալի դիրքին մեծութեանը մէջ մնաց շէնքը իր շէնք կառոյցին մէջ առանձին, խոհական: Բոլոր Քեսապցիներուն համար ան մնաց վերականգնելի միացող երագ: Այս երագին իրականացման համար հիմը դրաւ Ուսումնասիրաց Միութեան որ՝ թէեւ չկրցաւ իրականացնել Երագը բայց անցաւ ու տարածեց իր թելերը մինչեւ Լիբանան եւ Միացեալ Նահանգներ ու կանգնեցաւ ուսման կարօտ աշակերտներուն թիկունք:

Քեսապի ժողովուրդը շատ բան կը պարտի իր սիրելի Տոբոնին, կարծես զիրար կ'ամբողջացնեն: Ահա թէ ինչու իր յիշատակը իրականութեան մը պէս կ'ապրի ու պիտի ապրի բոլոր Քեսապցիներու սրտին մէջ:

Թող իր պաշտած հողը թռչունի փետուրներուն չափ թեթեւ կշռէ իր անիւններուն վրայ:

Յարգանք իր յիշատակին:

ՏՈՒԹ. ՅՈՎՀ. ԱՅԱՆԵԱՆ

THE LAST CENTINEL

In Memory of Dr. A. Injeikian

REV. HOVHANNES SARMAZIAN

For the last ten or so years he had to rely more and more on his black cane for his daily uphill walk from the town's center to his summer home (Kala). He had kept his tall stature yet his slow gate and the fact that he hung his head to one side were indicative of the weariness of his years.

Every time that we caught up to him, he would stop us and would inquire about the youth who had left town. "Where are you these days? What are you doing? Tell me all." And his next question, "What are you doing for Dr. Injeikian?" did not mean that he was seeking personal assistance but meant what have we been doing for our people, especially for Kessab.

"Know well that you have acquired all your gifts from this beautiful nature, the pure atmosphere of this town. Don't you be ungrateful. Don't ever forget Kessab."

He did not only preach this principal to some three generations, but he actually lived it. It seems that Kessab had become some kind of legendary Mother to him; no matter where he went, no matter how much glory and gain were offered to him as a physician elsewhere, he ignored them and rushed home to his enchanted village. For him, greatness meant service to his little village. His people needed his leadership. He was their physician; he was their selfless leader, intellectual, but above all he was their alert Sentinel. He stayed there till the end so that his flock would not be without their shepherd.

Kessab and its people owe a great deal to their "Doctur" which is what they called him in their own dialect. No matter what the dictates of circumstances, Dr. Injeikian was and remained a loyal and idealistic leader. For three quarters of a century, he served his people as a teacher, physician, social and political leader.

Everytime that we would visit him he would tell us of his fear that someday during one of his travels he might die far away from home and thus be buried in an alien corner. This could have been the reason that in his last years he refused to visit the United States where most of his children and grandchildren live.

Dr. A. Injeikian gave a great deal to our generation also. However, we are scattered from our Eagle's Nest and due to present day circumstances couldn't even pay our last respects to him. We were destined to hear the sad news of his passing away days later by reading about it in a newspaper corner.

Fortunately for him, he stayed home and is sleeping happily in his mother's lap, in the soil of Kessab.

Rest to his remains and respects to his memory.

Translated by S. A.

Dr. Injejikian Meets Death at 92

By DR. VAHE CHURUKIAN

Dr. Avedis Injejikian passed away in May, 1976, at the age of 92. Born in Kessab, Syria, he was also buried there. It was his earnest desire to be always with his people, even after death.

Dr. Injejikian was a man that devoted total self — mentally, emotionally and physically to the Armenian cause. His dreams and actions were rooted in his heartfelt concern not only for his fellow Kessabtzyss, Armenians in general and Armenia, but also for mankind. He was a “real man” in the sense Napoleon identified Goethe, the great German author.

Dr. Injejikian was humble, sincere, tactful, dependable and most willing to help *anyone* in need. He never cared for material prosperity. Most of the time even his professional services were for free. He was the father of Kessab, a true public servant, caring for the community than for himself. His life's work left a positive and lasting imprint on the lives of many Kessabtzyss.

Dr. Injejikian belonged to the Tashnag political party. He was a very active and productive member, contributing greatly with his intelligent leadership. However, for him the Party was a means, not an end. He was never a fanatic. Every Armenian, regardless of ideological persuasion, had the same respect and attention from him.

Any time I close my eyes and my spirit wings back to Kessab, along with the well-worn cobblestone and beautiful scenery, I always see the indefatigable Dr. Injejikian. He had concentrated in himself Kessab the town, the mountains, the forests, the houses, narrow streets, schools and churches, and most of all, the people.

A great Armenian man passed away. Let us try to follow in his footsteps and truly love and serve our fellow men. We need more Dr. Injejikians! God bless his soul.

ՄՏՔԻ ՃԱՄԲՈՎ

ԲԺ. Աւետիս Ինճէճիկեանի երկար տարիներու հետաքրքրութեան առարկաները եղած են իր ծննդավայրի պատմութիւնը, բառբառն ու սովորութիւնները: Մասնագիտական (լեզուաբանութիւն, պատմագրութիւն, պատմաբանութիւն եւն) աշխատասիրութիւններու մէջ շատ քիչ տելեկութեաններ պահուած ըլլալով, հակառակ իր պրպտումներուն, ան ո'չ եկեղացական գրքերու եւ սպասներու, եւ ո'չ ալ պապենական-գերզաստանային Աստուածաշունչերու մէջ կրցաւ կարեւոր տեղեկութիւններ երեւան բերել:

Ուստի ԲԺ. Ինճէճիկեան նախաձեռնեց յարաբերութեան եւ անթերցանութեան միջոցաւ բաւարարել իր անյագ ծարաւը: Շատեր պիտի պկայեն, թէ զանազան ընթերցումներու կամ խօսակցութեանց ընթացքին հանգուցեալ բժիշկը իր գրպանէն փոքր տետրակ մը հաղելով նօթագրութիւն մը կը կատարէր, որպէս, իրեն համար, հետաքրքրական, առանձայատուկ երեւոյթ կամ իրողութիւն: Ան այս բոլորը կատարեց որպէս անձնական նախասիրութիւն եւ հետաքրքրութիւն: Բայց անգան նը որ նօթագրութեանց գումարը դրամագլուխի մը չափանիշին հասաւ, ծանօթներու եւ մտերիմներու պնդումներուն հակառակ իր անկարելի եղաւ իրեն համար: —Եւ ո՞վ կար իրմէ աւելի բանիմաց տեղեակ եւ այս գործին ատակ մարդ: Հակառակ իր հեղինակ դառնալու կամ կոչուելու տրամադրութեան չգոյութեան, ան իրագործեց ծանօթներու ցանկութիւնը, որոնք կը կրկնէին. «նօթագրութիւններդ համադրէ ապագայի ուսումնասիրողներու համար, քանի անոնք դասապարտուած են կորստեան»:

Տարուեցաւ այդ աշխատանքը, սակայն բժիշկի մահով, լեզուաբանական մասը միայն (մեքենագրեալ 179 էջ) ձեւակերպուած եւ յանձնուած է Ուսումնասիրաց Միութեան Լոս Անճելըսի մասնաճիւղին առ ի հրատարակութիւն, իսկ պատմական բաժինը, որ իր ընտանեկան պարագաներու մօտ է, կը մնայ նօթագրեալ վիճակի մէջ դասաւորելու եւ մշակուելու անհրաժեշտութեան տակ: